

Ա.ԶԱՏ ԽՕՄՔ

ՇԱԲԱԹ, 5 ՄԱՅԻՍ 1906, ԱԼԵԿՍԱՆԴՐԻԱ

ԺՈՂՈՎՈՒՐԴԷ ԿԸ ԳՈՐԾԷ ՈՒ ԿԸ ԳՈՅԷ

Նախորդ շաբթու ըսինք թէ Ալեքսանդրիոյ հայ ժողովուրդը « կ'արթննայ »: Արթնցաւ, այո՛, ժողովուրդը, աչքերը սրբեց, երեսը լուաց և ըսաւ .

— Գործ տեսնանք:

Եւ ահա՛ կիրակի օր, նախորդ կիրակիէն շատ աւելի մեծ բազմութեամբ հաւաքուեցաւ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին, առաջնորդէն սահմանադրութեան գործադրութիւնը պահանջելու համար: Ս. Առաջնորդը ժամանակ չէր ունեցած ոտանաւոր մը պատրաստելու, հետևաբար արձակ լեզուով կրկնեց վեց ամիսէ ի վեր կրկնածը թէ՛ « ինք բան մը չկրնար բնել, պատրիարքարանի հետ թղթակցութեան մէջ է, հրահանգի կը սպասէ, պէտք է համբերել, ամիս մը, տարի մը, տասը տարի և եթէ հարկ ըլլայ բնան տարի, երեսուն տարի համբերելու է, ինք բան մը չկրնար բնել, ինք բան մը չընէրու համար առաջնորդ եղած է և թէ այդ ծանր պաշտօնին համար ամսական տասը ոսկի կ'առնէ առաջնորդարանի սնտուկէն, որովհետև բան մը չընելէն այնքա՛ն շարաշար կը յոգնի

որ վրան տժ չէ մնացած, ևն էր այս բաժնեբեր ապացուցանելու համար առաջնորդը կը մարի խորանին վրայ և Այս թատերական որապայք տեսարանը շատ շիտուկեր ժողովուրդ, որ ամենայն պաղարիւնութեամբ ծրար մը կ'ընէ իր առաջնորդը և կ'առը մը գնելով կը գրկէ Վսեմ-Քարթոզ փաշայի հասցէին: Քայց առաջնորդը բան մը չընելէն այնքան տկարացած էր որ կը նախընտրէ Գերմանական հիւանդանոցը երթալ կազդուրուելու համար:

Ասդին եկեղեցին, մէջ, ժողովուրդը կ'որոշէ գոցել առաջնորդարան եկեղեցի և դպրոց ու բանալիները յանձնել կառավարութեան: Եւ որոշումը գործադրութեան միացնելով մէկիկ մէկիկ առաջնորդարանի սենեակները կը կղպտին, զոտը եկեղեցին և դպրոցը կը կղպտին, — Այս ամենը տեղի կ'ունենայ ի ներկայութեան աստիկանական բարձրաստիճան պաշտօնեաներու, որոնք յատկապէս հրապրած էին, — և բանալիները կը յանձնուին Տ. Միհրան Տամատեանի՝ որ իբրև նոր Պետրոս Առաքեալ կրնգանի զանանք, եթէ ոչ Արքայութեան՝ գոնէ Դժոխքի բանալիներուն տէրը զանալովքի մը ժամանակ:



— Թուղթ մը տուէք որ մէջը փաթթէ բանալիները կը գոչէ, սահմանադրական ձայն մը:

— Լրագիր մը ո՞վ ունի, կը հարցնէ օրինասեր մը:

— Ահա՛ « ԱԶԱՏ ԽՊՍՔ », մը...

Էւ « Ազատ Խօսք » ր ձեռքէ ձեռք թռչելով կը հասնի Տ. Տամատեանի քով:

— Այդ բանալիները արժանի չեն « Ազատ Խօսք » ին մէջ փաթթուելու, կը գոչէ մեր բարեկամներէն մին զոր

ճանչնալու պատիւը չունինք:

— « Աղատ խօսք » ը անձնցմով շկրնար ազտոտիլ, քայց կրնայ դանձնք ժաքրել, կը պատասխանէ մեր մէկ ուրիշ քարհկաւր զոր նմանապէս ճանչնալու պատիւը չունինք:

— Խօսք կ'ոյեմ. կը պոռայ մէկն ալ անպիէն:

— Ազատ, կը հարցնէ Յ. Ղազիկեան և պարսպ պայուսակը ցոյց տալով կ'աւելցնէ, չինաց բոլորն ալ ծախուեցաւ:

Այդ իրարանցումին մէջ զերջապէս բանալիները իրենց ամօթալի մերկութիւնը կը ծածկեն մեր թերթին պարկեշտասուն ծալքերուն տակ:

Ու ամբողջ ժողովուրդը թափօր կազմած, հայկական նուագախմբին առաջնորդութեամբ, կ'ողողոյն զէպի կառաւարչատուն, բանալիները տանելու համար, ճամբան « կեցցէ սահմանադրութիւն » աղողակը թնկացնելով:

Գեղեցիկ օր արգարե, ուր ժողովուրդը իր իրաւունքին և ուժին գիտակից, խաղաղ ու կարգապահ, լախտի զճոական հարուածը կուտայ ամօթապարտ և անպատկառ ինամակալութեան մը:

ՉՈՒԱՐ ՃԱԼԻ ՄԻՋԱԴԷՊՄԸ

Կիրակի օրուան ցոյցին ատեն զուարճալի միջադէպներ ալ պատահեցան. ասոնցմէ մին է անշուշտ եկեղեցիին մուտքը, պատին վրայ դրուած ժարմարեայ և ոսկետառ արձանագրութեան մը ջարդուկտոր խորտակուած ներկաներուն ձեռքով: Այդ արձանագրութիւնը, ինչպէս Ալեքսան-

գրիացի ամէն հայ գիտէ. հոն երեք չորս տարիներէ ի վեր ամէն օր կը պատմէր թէ վոսմ. Բարթոյ փաշա Ս. Պօյոս Պեարոս եկեղեցին ներկիւս համար « Չերիս հարիւր յիսուն ոսկիս եգիպտականս » նո իրած է: Արդ, կիրակի օր, երբ ամէն կողմէ բողոքի ձայներ կը բարձրանային խնամակալութեան և մանաւանդ իր նախագահին դէմ, մարմարեայ արձանագրութիւնը, առանց շարժի յուզումէն զգածօ կրօ, պարտաբար և զրգոյշ, կը կրկնէր իր յատուկեան՝ յօսքերը.

— Բարթոյ փաշան զերիս հարիւր յիսուն ոսկիս եգիպտականս նո իրած է...

Եւ այդ վայրկեանին այս յօսքերը այնքան անսեղի, այնքան անպատշաճ երեցաւ ժողովրդին որ շատեր փափաք կը զգային արձանագրութեան երեսն ի վեր պոռալու:

— Սուս եղի՛ր, պե.....

Այս փափաքը պէտք մը դարձաւ յանկարծ և քանի մը հոգի գոչեցին

Օրոր գլխին բան մը զարկէք թո՛ղ չուէ...

Այն Աստուածը (1) որ Սաբեկայ ծառէն իոյ մը կախած էր պատրաստ, Արբահամու ողջակէզին համար, կիրակի օրն ալ, չիմ գիտեր ուրի՞՞ կոան մը մէջտեղ հանեց: Շատ մը բազուկներ բարձրացան կոանը առնելու համար և առաջին հարուածը իջան արձանագրութեան գլխին.

— Բարթոյ փաշա զերիս հարիւր յիսուն ոսկիս ե...

(1) Եհովայ, եթէ չեմ սխալիր.

գիպտականս նուիրած է, կրինեց ժարմարր, ժարմարնայ
պայարիննութեամբ մր:

Երկրորդ հարուածը աւելի ուժգնօրէն իջաւ և արձա-
նագրութիւնը շեցց:

Երրորդ չորրորդ հարուած.

— Բարթոյ փաշա զերիս հարիւր յիսուն ոսկիս Ե-
զի զտականս նուիրած է, կ'ըսէր զսեմ ժարտիրոսը սառչիկ-
եան համբերատարութեամբ մր:

Հինգերորդ անգամ կռանը բարձրացաւ.

Բարթոյ փաշա զերիս հարիւր յիսուն...

Խօսքը կիսկատար մնաց: Կռանը այս անգամ ջախ-
ջախած էր հէ՛զ արձանագրութիւնը:

Հանգիստ իր նշխարներուն, որոնք այժմ կը պա-
հուին իբրև սրբազան ժառանգք Բարեպաշտներու քով:



ՅԱԽԱԼԻ ՄԻՋԱԳԷՊ ՄԸ

Ամենախորին ցուով կ'արձանագրենք խիստ զժպտուն՝
միջպագէպ մը որ կիրակի օր պատահած է և որուն ա-
կամայ տեղի տուած եղանք, մեր կողմէ առանց սր և է
գիծումի կամ կանխատեսութեան

Փողոզբողային ցոյցին ամենաջերմ վայրկեանին, երբ
հարիւրաւոր բերաններէ — կեցցէ՛ Սահմանադրութիւն,
կեցցէ՛ օրէնք, անկցի սպորէն իննամակալութիւնը, դուրս
նետեցէ՛ք անբարոյականները, քուէարկութիւն կ'ուզենք,
սահմանադրութեան զործադրութիւնը կը պահանջենք,
են. — բազմազան բայց միանպատակ աղաղակները կը
զուռային, յանկարծ ներս կը մտնէ Յ. Ղազիկեան «Ազատ

նօսք» ի նոր թիւերը թեւին տակ:

Ներկաներէն մին, անշուշտ միամտաբար եւ ասանց որ ե է չոր գիտա որով թեան կամաց մը կ'ըսէ բովինին, Տ. Ղազիկեանը ցոյց տալով.

— Կ'արծեմ «Ազատ խօսք» ի նոր թիւը հրատարակուեր է...

Լուրը կայծակի արագութեամբ կը տարածուի ամէն կողմ եւ ժողովարդը պահ մը կը մտնայ Օրէնր, Իրաւունր, Սահմանադրութիւն, կը խուժէ խեղճ Ղազիկեանի վրայ՝ «Ազատ խօսք մը տո՛ւր, Ազատ խօսք մը տուր, ազադակելով: Տ. Ղազիկեան կուրճք կը դնէ փոթորիկին, և մեր առաջնորդէն աւելի կ'որովի եւ պաղարիւն, տառնց մարելու եւ գերմանական հրամանացը երթալու, կը ցատկէ ամսոի մը վրայ եւ կը գոչէ:

— Եւելօք կեցէ՛ք, եթէ ո՛չ բոլոր թերթերը կ'այրեմ եւ ձեզ տառնց «Ազատ խօսք» ի կը ձգեմ:

Այս սպառնալիքը իր ազդեցութիւնը կ'ունենայ. ամէն ոք օրինապահութեամբ եւ կարգով կուգայ եւ թերթ առնելով կը դառնայ օրէնքին պաշտպանութեան: Միայն թէ, ինչպէս վերը ցու յայտնեցինք այդ մասին, այս միջադէպը տեղի կուտայ վայրկենական շփոթութեան մը:

ԹԱՓՕՐԸ

Մարմարեայ արձանագրութեան խորհակումէն, Ս. Առաջնորդին հիւանդանոց փոխադրուելէն, Առաջնորդարանին, դպրոցին և եկեղեցիին փակումէն և բանակիները ձրարուելէն ետք, տակաւին ժողովրդին եռանդը չէր մարած: Փամը երեքն էր, շատեր չէին ճաշած, մեծ մասը՝ կեցցէ Սահմանադրութեամբ» կչտացած էր. Ո՛մանք «Անկցի

ինամակալութիւն կուլ տուած էին՝ մեծամասնութիւնը «Ազատ խօսք», ի ընթերցումով անօթութիւնը մոռցած էր, այսուհանդերձ ո՛չ որ մտքէն կ'անցընէր թողուլ երթալ:

— Դեռ ին՞չ ընենք, կը մտաւային կարծես:

— Թափօր կազմենք և երթանք շնորհակալութիւն յայտնենք կառավարութեան...

Գալստիսը լաւ էր և անմիջապէս գործադրուեցաւ:

Հայկական Նուագախմբին առաջնորդութեամբ թափօրը կազմուեցաւ և ճամբայ ելաւ դէպի անգլիական պահականոցը, անկից Շէրիֆ փաշայէն իջաւ Մէնչիլէյի հրապարակը և Սարաֆիէէն անցնելով հասաւ կառավարչատուն:

Թափօրին առջևէն, բանալիներու ձրարը կ'երթար, կարծես իբրև նոր հրեղէն սիւն մը որ ժողովուրդը գէպի Սահմանադրութեան Աւետեաց երկիրը կ'առաջնորդէր:

Ժողովուրդը որ հետզհետէ բազմացած, ահագին ամբոխ մը ձևացուցած էր, ճամբան անընդհատ «կեցցէ Սահմանադրութիւն», կ'աղագակէր իր օրինասէր թոքերուն բոլոր ուժովը:

Երբ թափօրը կառավարչատուն հասաւ՝ հայկական նուագախմբը խտրական քալերով հնչեցուց և կեցցէնելով ու ծափահարութիւններով օղը թնդացուց:

Ա Ր Կ Ի Ի Ն Ք Ը

Բազում աղաղակ վասն ոչնչի՞[»] արդեօք, կը հարցընէին կիրակի իրիկուն Սկեպտիկներէ ոմանք:

Բարեբաղդաբար ո՛չ: Արդիւնքը՝ անմիջական յաղթանակը՝ կատարեալ և գոհունակութիւնը ընդհանուր եղաւ:

Խօսքը տանը «Ազատ Բեմի»,

«Երկուշաբթի օր, ըստ կարգադրութեան, ժողովրդ-
հան պատգամատրները ներկայացան վսեմ. Մուսմաֆա
Ապատի փաշայի. սրան յօս կը գտնուէին նաև Բարթոդ
փաշա և իր արբանեակները: Կառափարիչը պաշտօնապէս
յայտարարեց թէ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ
ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՇՐԱՄԱՆԸ ԿԸ ՏՐԱՄԱԴՐԷ ԱԼԵՔՍԱՆԴ-
ՐԻՈՅ ՇԱՅՈՅ ՎԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵԼ ԺՈ-
ՂՈՎՈՒՐԴԻՆ ՔՈՒԷՈՎ, ՇԱՄԱՁԱՅՆ ԱՁԳԱՅԻՆ ՍԱՂ-
ՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ:

Որեմն կեցցէ՛ Սահմանադրութիւն, կեցցէ՛ Ալեքսան-
դրիայ հայ ժողովուրդը ու, թէև ինկամ՝ անգամ մըն ալ
անկցի՛ ապօրէն խնամակալութիւնը:

ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ԼՈՒՐԵՐ

Կ'ըստ ի յԱ Բարթոպեան խորտակեալ արձանագրու-
թեան տեղ, ժողովրդային հանգանակութեամբ ժարմարեալ
նոր արձանագրութիւն մը պիտի գրուի հետեւեալ վերտա-
նութեամբ.

ԿԵՅՅԷ՛

ՕՐԷՆՔ ԵՒ ՍԱՂՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

29 ԱՊՐԻԼ 1906

Գահիրէցիներն ալ եթէ փափաքին պիտի կրնան
ժամանակիչ հանգանակութեան:

Ս Առաջնորդ հայրը որ գերմանական հիանդանու-
ցը փոխադրուած էր, մերժեք է հիանդանոցի բժշկին ար-

ւած զեղերը տանել և երբ պատճառը հարցուցիր են, և՛
 դանտանի վարդապետ միամտութեամբ պատասխաներ է.

— Պէտք է նախ Պատրիարքին տեղեկագրիմ և
 անկէ հրահանգի սպասեմ:—

Խնամակալութեան յանկարծական մահուան առթիւ
 Տ. Նիկողոս Սանտրքեան փոխան ծագկեպոսակի երկու օ-
 խա ստեպղին նուիրած է Տ. Յ. Ուրբեանի:

Ինչպէս յայտնի է, Եկեղեցիին, Դպրոցին և Առաջնոր-
 դարանին բանալիները տասնութը ժամուան սահմանա-
 դրական մարդազործոյ բնակութենէ մը ետքը յանձնուե-
 ցան Առաջնորդարանին: Արդ, ի մեծ ապշութիւն, առաջ-
 նորդարանի բոլոր ապուշներուն, երբ ժամկոչ, տնտես, տի,
 բացու, բարապան ու վարժապետ կը փորձեն այդ բանա-
 լիները գործածել, բանալիները կ'ըմբոստանան և իրենց
 պարտականութիւնը չեն կատարեր:

Ամէնքն ալ թունց սահմանադրական կտրած էին...
 Օրէնքի Ծնորհքը վրանին իջած էր և բացէ ի բաց կը մեր-
 ձին բանալ — զոներն ապօրինութեան, զեղծումի և « ա-
 սերածի պղծութեան » ըստ Դանիէլեան աստուածաշունչ
 բացատրութեան:

Խնամակալութիւնը ստիպուեր է նոր բանալիներ շի-
 նել տալ համաձայն իր ապօրէն կազմութեան:

Կը կասկածուի թէ ըմբոստ բանալիներու գործին մէջ
 Միհրան ԵԱ... մատ ունի:

Սխալ է թէ՛ Նշան ա մատ ունի:
 Սոսկալի՛, սոսկալի.

Կարգ մը ցարամիտ ու խառնակիչ անձեր, անշուշտ չիլ ու ալտոտ դիտումներով, անցած շաբթուան «Ազատ Խօսք» ի մէջ երեցած «Սուլթանը կը ճամբորդէ», վերնագրով գրուածին մասին սխալ ենթագրութիւններ ըրած ու տարածած են գրողին իսկութեան նկատմամբ:


Անհիմն կասկածներու տեղի չի տալու համար պէտք կը զգամ յայտարարել թէ ես էի գրած այդ տողերը, ինչպէս ես եմ հեղինակը «Ազատ Խօսք», ի մէջ երեցած բոլոր անստորագիր գրուածքներուն, որչափ ալ երբեմն անհաճոյ ըլլան անոնք:

Սա ևս հարկ կը զգամ յայտարարելու որ ակնարկուած գրութեան մէջ եթէ հարուած մը կար՝ անիկա ուզուած էր սուլթանական պատուանշանին և ո՛չ թէ Ազնուաշուք Տիկին Միհրան Քալֆայեան Խանի, որուն մասին երբեք ինքզինքիս չը պիտի ներէի որ և է անհաճոյ և անարդար դատողութիւն:

Յաւալի է որ մեր մէջ շատ կը գտնուին տեսակ մը մարդիկ որոնք պառաւ ջատուկներու պէս հաճոյք կը զգան աս ու ան իրար ձրգեւ սուտ ու պղտոր վայրահաջութիւններով, միմիայն անձնական ճղճիմ վրէժխնդրութիւններ կամ հակառակութիւններ գոհացնելու նպատակով:

Ինչ զատ «Ազատ Խօսք», ի մէջ գրողները
ունին իրենց յատուկ ծածկանունները և միան-
գամայն ունին բաւական քաջարտութիւն ի-
րենց յօդուածներուն հայրութիւնը ընդունելու:
Վնանուն քննադատներ կամ մութի մէջ ծած-
կուած հեգնաբաններ չի կան: ԱՁԱՏ ԽՕՍՔ, ի
Մարտարեմին վրայ:

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ



ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԱԿԱՆ ՔԱՐԸ

Թագաւորութիւնները թագաւորութեանց վրայ պիտի
նշան, օրինասէր ժողովուրդները՝ ապօրէն խնամակալու-
թիւններուն վրայ... ու քար քարի վրայ չի պիտի մնայ...:

Մարգարէական խօսքեր, կիրակի օրուան պատմական
դէպքերուն համար ըսուած:

Անկուճ, անկումներ: Ո՞րն աւելի ողբալի, բարեհալ,
փշրուելով, թէ խնամակալութեանը, յաղթուելով:

Ժողովրդային զայրոյթին և հատոյր մօրճին հա-
րուածներուն տակ, ինկան երկուքն ալ անյարիւր, ինկան
մեծաշառաչ, ինկան միաժամանակ — յուզիչ եղբայրակ-
ցութիւն դժբաղդութեան մէջ:

Քարը կը պատմէր խնամակալին փառքը, խնամակալը
կը պատմէր քարին սրբապղծութիւնը, ի սեմ նուիրական

վայրին իսկ հիմայ. ըստ Տէկլի խօսքին, թերևս...

« Այս երկու մեծ բեկորները կը միխթարեն զիրար, »

Այլ բարը կարծես յուսուի մը բլլար որ մինչև հիմայ կանգուն պահեց ինամակալութեան ամբարտաւան ու գասապարտած պոյութիւնը: Տխրահոչակ թագահանի մը « ասագր » և այդ « բարբ » միացած՝ կը թուէին երկար տառնի համար կառուցած բլլալ ինամակալութեան ապօրինո թեանց շէնքը. բայց ժողովրդային ցասումը, ահեղ ապապալիչ, մէկ օրուան մէջ գետնի հաւասար կ'ընէ զայն:

Վերջացաւ ինամակալութեան գեմ պայխաւը, ուրովհետև ալ չի կայ, գնաց անոր փարս, ու վանկ մը միայն մնաց. — վանք մը ուր զրկելու է զայն՝ ինամակալութիւնը, որպէսզի հոն ապաշխարէ ու բաւէ իր մեղքերը:

Ժողովուրդը շատ ունէր զանգաս, ինամակալը շատ ունէր փանփար... բայց կորսնցուց ամեն բան կորսնցնելով բարը. — ու մնաց այժմ աւելի փան... ելի բան հրքեր:

« Ո՛վ որ յանցանք չունի թող առաջին բարը նետէ ինամակալութեան, բութր է գրեթէ Առաջնորդը, առջի կիրակին, — ան ալ պատմական երբ ժողովրդէն մարդեր թուեր էին ինամակալութեան մեղքերը, անհամար ինչպէս աստղերն երկնքին և աւազները... Ուղտորեանին:

Ու ժողովորդը, ինքզինքը անմեղ զգալով, նետեր էր բարը՝ ինամակալութեան, կամ նետեր էր ինամակալութեան բարը:

Ու եղաւ արդարութիւն:

ՔԱՐ (ՈՅ ԱԼՖՕՐՍ)

Միթինկը

Վաղը կիրակի, ժայիս 6ին, առտուան ժամը 10 ին Ահմադաբա թատրոնին մէջ պիտի գումարուի ՄԵԾ ՄԻ-
ԹԻՆԿ մը: Հոն նախ Ագիբոսանդրիոյ հայ հասարակութեան
տեղեկութիւններ պիտի արտին Սահմանադրական պայքա-
րին և անոր յաջող արդիւնքին վրայ: Յետոյ պիտի ձեռ-
նարկուի ընտրութեան երեք ներկայացուցիչներու, որոնք,
ըստ փափաքին Ն. Վ. կառավարիչ Մուսթաֆա Ա. պատի
փաշայի, և Ն. Վ. ֆոմանտան Հօբբինորն պէյի, Սահ-
մանադրական ընտրութեան նախապատրաստութեանց առ-
թի, ժողովրդեան իրաւունքները և փափաքները պիտի
ներկայացնեն տեղական իշխանութեան:

Մտորը ձրի է:

Անշուշտ Ագիբոսանդրիոյ բոլոր պարտաճանաչ հայերը
պիտի փութան ներկայ գտնուիլ այս միթինկին և իրենց
ազգային — բողոքացիական պարտականութիւնը կատարել:
Երկու կիրակիներու միջոցին ժողովրդեան ցոյց տուած
խանդավառութիւնը արդէն երաշխաւորութիւն մըն է որ այս
կիրակի ևս նոյն եռանկով պիտի գայ իր ոսնակոխ եղած
իրաւունքները պաշտպանելու:

Կիսկատար յաղթութեան մը դափնիներուն վրայ
չքննանանք և պայքարը նոյն կորովի ուժգնութեամբ առաջ
մղենք, մինչև որ «Օրէնքի», վերջնական ու կատարեալ
տիրապետութիւնը ապահովուի:



ԽՄԲԱՏԵՂԻՆ

Վերջերս Հայ Յ. Գաշնակցութեան խմբատեղին փակուած ըլլալով, անյարմարութեան պատճառով, խումբ մը երիտասարդներ մարմին մը կազմած են լաւագոյն պայմաններով ուր խմբատեղի մը կազմելու նպատակով: Սոյն երիտասարդները պիտաւորութիւն ունին մէկ ոսկինոց 400 ի չափ սոմսակ հրապարակ հանել և յոգովրդային փոխառութեան մը զիմել՝ վարձքի և կոհնաւորման ծախքերը հոգալու համար, Տոմսակներուն փոխարժէքը յետոյ պիտի վերադարձուի, ինչպէս եղած էր ասիկէ առաջ:

Անշուշտ Ալեքսանդրիոյ հայ հասարակութիւնը համակրութեամբ պիտի քաջալերէ այս բարենպաստակ ձեռնարկը և հարկ եղած օգնութիւնը շտապ զլանայ երիտասարդ գործիչներուն նպատակը յաջողութեամբ պատկելու համար:



“ԱԶԱՏ ԽՕՍՔ”, Զեռ-Քէ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Ալեքսանդրիայ՝ Տ. Յ. Ղազիկեանի քով և Շէրիֆ փաշա լրագրաւաճառ Տ. Թեյլալեանի խնամովը.

Փահիրէ՝ լրագրաւաճառ Տ. Հունիկ և Կօլաշըն Քէօշքի քով և «Լրաբեր» թերթի ցրուիչին յօտ:

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կրկին զինով:

Տ. Յ. Սիլվերման, աստ.— Ենթահայկալ ենք ձեր համակրական և բաշարական տողերէն: Դժբախտաբար ձեր յօլուածը չպիտի կրնանք հրատարակել, տաճկերէն զրուած բլլալուն համար:

Տ. Սեմեօն Կեօնիլեան, Եանկայի.— Առաջին թիւէն սկսեալ տասը օրինակ կը գրկուի ձեր հասցէին: Չէինք գիտեր թէ այդքան բազմաթիւ հայեր կը գտնուին այդտեղ:

Տ. Արիկ Սեղբոսեան, Քարաբաս.— Ենթահայկալ թիւն ձեր հեռագրին համար:

Տ. Ճանիկ Աճեմեան, Գահիրէ.— Այդ խնդրը լրիջ նկատողութեան առած ենք և պէտք եղածը գրած ենք ի թրանսլաալ:

Տ. Բօլ թրօն, Չանգիպար.— Վերջին պահուն ըստացանք ձեր շահեկան թղթակցութիւնը: Յաջորդ թիւով կը հրատարակուի: Ձեր ջանքերը դովելի են. 40 օրինակ կը գրկենք առաջին թիւէն սկսեալ:

Սըր Ճէյմս Բէլի, Սիտնէյ, Աւստրալիա.— Ձեր առաջարկը յատուցինք Տ. Աստուր պէյ Եերիտեանի. բացարձակապէս կը մերժէ Սիտնէյի համալսարաններու վերատեսչի պաշտօնը, առարկելով թէ իր ներկայութիւնը անհրաժեշտ է Պօղոսեան Գօլէժի համար:

Գեր. Աղաւնուհի Հայր Սուրբ, Աստ.— Ձեր ոտանաւոր բողոքը ստացանք և գրեցինք Ս. Պատրիարք հօր ուրիշ հրահանգի կը սպասենք ութը ամիսէ ի վեր: Համբերեցէ՛ք, քիչ մըն ալ համբերեցէ՛ք և եթէ պէտք ըլլայ քչիկ մըն ալ համբերեցէ՛ք:

“ ԱԶԱՏ ԽՕՄՔ ”, Ի Պայժանները

- ԱԶԱՏ ԽՕՄՔ - ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՄԲԱԾ ՕՐԵՐԸ
Եզիպտոսի համար բաժնեզինն է

40 ԹԻԻԸ 40 ՂՐԵ. ՈՂՋ
20 ” 20 ” ”

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱ	40	ԹԻԻ	10	ՖՐԱՄՔ
ՌՈՒՍԻԱ	”	”	4	ՐՈՒՊԼԻ
ԱՄԵՐԻԿԱ	”	”	2	ՏՈԼԱՐ

Բաժանորդագրուիքներ կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԵ. ՈՂՋ

“ ԱԶԱՏ ԽՕՄՔ ”, Ի համար բաժնեզին կամ
որ և է գրուիթիւն պէտք է ուղղել հե-
տևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPT)

Ծանուցումներ կրնդունուին մասնաւոր
պայուսաններով:

Պատասխանատու . Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. Փոքր. Գ. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ Ալեքսանդրիա